| | |
|---|---|
| Դասընթացի անվանումը (կրթամոդուլի դասիչը) | **ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԵՏ (ԿԱ, ԿՆ)/ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (7.20ԳԴՋ026)** |
| ECTS կրեդիտ | 20 կրեդիտ |
| Ուսումնառության վերջնարդյունքներ | Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի.<br><br>*(գիտելիք և իմացություն)*<br>• ներկայացնել գիտական թեզերի պատրաստման կարգը, հետազոտությունների նպատակի, խնդիրների, մեթոդաբանության, գործիքների սահմանման, տնտեսական արդյունավետության գնահատման կարգը,<br>• պարզաբանել մագիստրոսական թեզի թեմայից բխող հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները,<br>• ճանաչել ինժեներական գեոդեզիայի, կադաստրի և քարտեզագրության ոլորտում արդի տեխնոլոգիական և տեխնիկական առաջընթացի ուղղությունները,<br>• տիրապետել կազմակերպատեխնոլոգիական նախագծման նորմատիվային բազայից օգտվելու կարգին:<br><br>*(կարողություններ)*<br>• մշակել մագիստրոսական թեզի թեմայով նախատեսված բարդ տեխնոլոգիական գործընթացների տեխնոլոգիական քարտեր, աշխատանքների կատարման և գեոդեզիական ու կադաստրային աշխատանքների կազմակերպման նախագծեր (ԿԱ),<br>• կիրառել գեոդեզիական, կադաստրային և քարտեզագրական աշխատանքների կազմակերպման մոդելավորման բոլոր ձևերը, այդ թվում՝ ցանցային (ԿՆ),<br>• կատարել տեխնիկատնտեսական հիմնավորումներ և համեմատական վերլուծություններ,<br>• պատրաստել գիտական հոդվածներ, զեկուցումներ և արտոնագրային հայտեր,<br>• կազմակերպել կլոր սեղաններ և շնորհանդեսներ: |

| | |
|---|---|
| Մագիստրոսական թեզի պատրաստում և պաշտպանություն | Մագիստրոսական թեզի պատրաստումն իրականացվում է ըստ անհատական պարապմունքների ժամանակացույցի և թեմատիկ պլանի:<br><br>***Թեմաների ցանկում ընդգրկված են՝***<br>• մագիստրոսական թեզի կառուցվածքը և բովանդակու– թյունը, պաշտպանության կարգը,<br>• գիտական թեզի նպատակի, խնդիրների, մեթոդաբանու– թյան, եզրակացությունների և առաջարկությունների սահմանման կարգը,<br>• գիտական գրական աղբյուրների ուսումնասիրման կարգը,<br>• գիտական վերլուծությունների և համեմատությունների մշակման կարգը,<br>• արդի գեոդեզիայի, կադաստրի և քարտեզագրության ոլորտում առկա տեխնոլոգիական և կազմակերպական հիմնախնդիրները,<br>• մոդելավորումը գեոդեզիայի, կադաստրի և քարտեզագրության կազմակերպման ոլորտում,<br>• ՀՀ գեոդեզիական, կադաստրային և քարտեզագրության ոլորտում նորմատիվային բազայի բարելավման հիմնախնդիրները: |